ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
14.03.2023Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 26 անդամները, բացակայում է Նորիկ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

- *Համայնքի ղեկավարի տեղակալներ Ս.Վարդանյանը, Գ.Գրիգորյանը, համայնքի ղեկավարի գլխ. խորհրդական Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ա. Ծերունյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:*

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական Անտառային փողոց թիվ 45 հողատարածքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
6. Սեփականության իրավունքով Էրիկ Միրաքյանին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
7. Փողոցի անվանակոչելու համար համաձայնություն տալու մասին:
8. Չարենցավան համայնքի 2023-2027 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
9. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 3-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

«Քաղաքացիական պաշտպանության ծառայության ստորաբաժանումներ ոժիտ մեջ են «Հատուկ կարգի» ստեղծագործություն: Կցված է «ՔՊ ՊՄ» բաժնի «Հատուկ կարգի»

Հ. Շահգալդյան

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 16 դեմ - 10 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 . Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:

/Զեկ.Գ.Ամֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի/կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջարկեց համայնքապետարանում անցկացնել արտաքին աուդիտ՝ Զարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն վերաբերյալ, առաջարկը դրվեց քվեարկության:

Կողմ- 10 դեմ - 14 ձեռնպահ -2

Առաջարկը չընդունվեց:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-14 դեմ-12 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդված 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով. ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 79-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելված N 1-6.
2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3 Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ.Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան 7-րդ թաղ., 3- րդ շենքի 47 բն. բնակիչ ***Դեզդեմոնա Արտուրիկի Անդրյան*** 2023 թվականի մարտի 2-ի թիվ 992-16, Չարենցավան քաղաքի 4-րդ թաղ. 7-րդ շենքի 21 բն. բնակիչ ***Նունե Միսակի Մեխակյան*** 2023 թվականի մարտի 3-ի թիվ 995-16, Չարենցավան 3-րդ թաղ., 26- րդ շենքի 2 բն. բնակիչ ***Արուսյակ Վոլոդյայի Աբրահամյանի*** 2023 թվականի մարտի 3-ի թիվ 1017-16, Արզականի գյուղի Ծաղկունյաց փ. 31/4 տան բնակիչ ***Բախտիկ Միլիտոնի Հայրապետյանի*** 2023 թվականի մարտի 3-ի թիվ 993-16 և Ալափարս գյուղի 19 փ. 28 տան բնակիչ***Լեյլի Գրիշի Պողոսյանի*** 2023 մարտի 3-ի թիվ 994-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Դեզդեմոնա Արտուրիկի Անդրյանին***,
2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Նունե Միսակի Մեխակյանին***
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Բախտիկ Միլիտոնի Հայրապետյանին***,
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Լեյլի Գրիշի Պողոսյանին***,
5. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ ***Արուսյակ Վոլոդյայի Աբրահամյանի***ն:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջարկեց դիմումատու բնակիչներին հատկացվող գումարը 150.0 հազար դրամից բարձրացել 200.0 հազար դրամի:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օգտագործելու համաձայնություն տալու մասին:

/Հեկ.Ս.Վարդանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով , 77-րդ հոդվածով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի թիվ 49 որոշման, ***առաջարկում եմ.***

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացիների դիմումների:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Լուսյա Թադևոսյան	3-1-16	2200000	Սեփականություն	Անհատույց
2.	Մաքսիմ Միրումյան	3-1-20	1800000	Սեփականություն	Անհատույց

2.Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական Անտառային փողոց թիվ 45 հողատարածքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը) ենթակետով և հաշվի առնելով Էդգար Պետրոսյանի 05.08.2022 թվականի թիվ 3299/07 դիմումը. ***առաջարկում եմ.***

1. Թույլատրել 25 տարի ժամկետով համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական Անտառային փողոց թիվ 45 արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված 0.6895 հա մակերեսով հողատարածքը՝ տարեկան 500.0 հազար դրամ վարձավճարով տրամադրելու Էդգար Պետրոսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն

Հարցի շուրջ ծավալվեց քննարկում:
Ավագանու անդամները վարձավճարի բարձրացման հարցի քննարկման արդյունքում, որոշեցին սահմանել տարեկան 500.0 հազար դրամ վարձավճար:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Սեփականության իրավունքով Էրիկ Միրաքյանին պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման 64-րդ կետի դրույթներով և հինք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 01.02.2023 թ. թիվ 5 եզրակացությունը. ***առաջարկում եմ.***

1. Սեփականության իրավունքով Էրիկ Միրաքյանին պատկանող 07-019-0201-0049 ծածկագրով 0.05489 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը համարել փոխված որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. Փողոց անվանակոչելու համար համաձայնություն տալու մասին:

/Բ.Բալբաբյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի նախաձեռնող խմբի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի ***3-րդ թաղամասի 2-րդ փողոցն*** անվանակոչելու ***Վուդրո Թոմաս Վիլսոնի*** անունով :
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բենիկ Բալբաբյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-17 դեմ-1 ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

8. Չարենցավան համայնքի 2023-2027 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

/Ա.Ծերունյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 82-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2023-2027 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի/կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ Չարենցավան համայնքի ավագանու զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-14 **դեմ-4** **ձեռնպահ-8**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

9. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 3-րդ հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

/Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով .***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ հերթական նիստի օր և ժամը սահմանել 2023 թվականի ապրիլի 06-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Խլղաթյան Արսեն
Մակինյան Վարդան
Շահգալդյան Հակոբ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ
Պողոսյան Մնացական
Խեչոյան Անահիտ
Պապոյան Դավիթ
Բաբայան Նարեկ
Բալյան Աննա
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Սահակյան Գառնիկ
Ղամբարյան Գարիկ
Պալյան Գարիկ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ